**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

*22. 10. 2022 թ. Ք. Իջևան*

Նախագահ՝ Վ. Ա. Աղաբաբյան

Քարտուղար՝ Ք. Հ. Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ***2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:*** (**Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան**):
2. ***Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաների հաստատում:*** (**Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան**):

*ԼՍԵՑԻՆ.*

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը արձանագրեց, որ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքները նախօրոք կազմակերպված է: Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.*

Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը, Հ. Աստրյանը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.*

2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

*ԼՍԵՑԻՆ.*

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող կրթական ծրագրերի կողմից տրված ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները: Նա նշեց, որ գիտական ղեկավարների կողմից առաջադրված հետազոտական և ավարտական աշխատանքների թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են հետազոտական և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, արդիական են:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.*

Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների ղեկավարները նշեցին, որ ամբիոններում քննարկվել են թեմաների վերնագրերը, հստակեցվել ներկայացվող պահանջները:

*ՈՐՈՇԵՑԻՆ.*

Հաստատել 2022-2023 ուստարվա ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Մխիթարյան